

Թիւն տուաւ, եւ ընդդէմ միաբնակաց երկու գիրք գրեց՝ Քրիստոսի երկու բնութեան, Հոգւոյն Արքայ նաեւ յորդուոյ բղխման, եւ Քահանայապետին գլխաւորութեան վրայ: Յայտնի չէ թէ այս գրքերը Պոլիս գրած է թէ ի Հռոմ. տեղ մը կարծես աւելի առաջինը կ'ակնարկէ: Այս գրութիւններն ինչպէս նաեւ Յովհ. Խուլի ուրիշ ընդօրինակութիւններն ու թղթերն անշուշտ հիմայ Հռոմ Բրորականտայի Գիւանը կը գտնուին, որուն մէկ հարեւանցի ցուցակին համեմատ՝ կայ հոն հայերէն գրութիւն մը «Ջատագովութիւն երկուց բնութեանց Քրիստոսի ընդդէմ Հայոց»: Յամենայն դէպս կալանոս տեսած է վերոյիշեալ գրութիւնները, եւ անկէ վկայութիւններ յառաջ բերած: Ահաւասիկ կալանոսի Յովհ. Խուլի մասին գրածներն ամբողջ.

Galanus, Pars Altera, Tomus I. Romae 1658.

Սկիզբն, առանց իջաթիւի, թղթ. 14բ.

«Յովհաննէս մականունն Խուլ վարդապետ, որ էր Պատրիարք Կ. Պոլսի, եւ այր իմաստունն եւ առաքինի. գրեաց զգիրս ընդդէմ միաբնակաց եւ ասողաց զՀոգին սուրբ ի Հօրէ միայնոյ բղխել: Նա եւ գնաց ի մեծն Հռոմմ առ ի պատուել զառաքելական սուրբ աթոռն, եւ յանդ եկաց երկար ժամանակաւ մինչեւ ի փոխին իւր յաստի կենացս առ Աստուած:»

Անդ էջ 66. «Ուստի արհիեպիսկոպոսն Կոստանդինուպօլսի յոհաննէս Խուլ վարդապետ կոչեցեալ՝ ի գիրքն զոր շարադրեաց ընդդէմ նոցին վարդապետացն ասէ այսպէս: Աղանդն եւտիբեայ մտեալ ի մէջ հայոց. հիմնեցաւ, բարձրացաւ, կա-